

ՊԱՏԳԱՄ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Նորթ Անտովըր, 10-12 ՄԱՅԻՍ, 2018

Գերաշնորհ, գերապատիւ, հոգեշնորհ եւ արժանապատիւ հոգեւոր հայրեր,
Յարգելի երեսփոխաններ, Հոգաբարձութեանց ներկայացուցիչներ եւ
Սիրելի հիւրեր,

Այս պահուս, երբ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Արեւելեան Թեմի Երեսփոխանական Ընդհանուր Ժողովը պաշտօնապէս արդէն իսկ յայտարարուած է, քրիստոնէական սիրով եւ հայրական գործովանֆով կ'ողջունեմ ձեզ բոլորդ, ձեր մէջ տեսնելով ծառայական այն ոգին, որ մղիչ ոյժն է ձեր նուիրումին՝ հանդէպ մեր եկեղեցւոյ եւ ժողովուրդին:

Առաջին առիթով, փառք եւ գոհութիւն կը յայտնեմ ամենաբարին Աստուծոյ, որ իր առատ ողորմութեամբ եւ քաղցր սիրով օրհնեց մեզ՝ որպէսզի Աւետարանի քարոզութեամբ եւ մեր եկեղեցւոյ կանոններուն ու աւանդութեանց հաւատարմութեամբ ծառայենք մեր պանծալի ժողովուրդին:

Երախտագիտական զգացումներով եւ որդիական ակնածանֆով շնորհակալութիւն կը յայտնեմ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան արժանընտիր Վեհափառ Հայրապետին՝ Նորին Սուրբ Օծութիւն Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, որ իր յորդորներով եւ ցուցմունֆներով մեծապէս օգտակար դարձաւ՝ մեր Թեմի հոգեւոր եւ վարչական կեանֆին բարւոք ընթացֆին համար:

Եղբայրական ողջոյնի խօսք ունիմ Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդին՝ Բարձրաշնորհ Տ. Մուշեղ Արքեպիսկոպոս Մարտիրոսեանին եւ

Քանատայի Թեմի Առաջնորդին՝ Բարձրաշնորհ Տ. Բարգէն Արքեպիսկոպոս Չարեանին: Ինչպէս անցնող տարիներուն, նոյնպէս ալ այժմ, մեր յարաբերութիւնները մեր բոյր թեմերուն հետ եղան եւ պիտի մնան մտերիմ եւ եղբայրական, միշտ ալ գործնապէս աջակցելով իրարու եւ գործակցելով հոգեւոր ու ապագային մեր ծրագիրներուն մէջ: Երկու Սրբազան Առաջնորդ հայրերուն կը մաղթեմ յաջողութիւն՝ իրենց աստուածահանոյ առաքելութեան մէջ:

Եղբայրական ողջոյններ էջմիածնական Թեմի Նորընտիր Առաջնորդին՝ Հայր Դանիէլ Վարդապետ Ֆնտեանին: Ինչպէս անցնող տարիներուն, վստահեմ որ Հայ Եկեղեցւոյ գերագոյն շահերուն համար, պիտի շարունակենք գործնապէս աջակցիլ իրարու՝ մեր եկեղեցւոյ բարօրութեան եւ յառաջդիմութեան համար:

Յանուն Ազգային Վարչութեան Կրօնական եւ Վարչական Ժողովներուն, մեր Թեմի եկեղեցական բոլոր համայնքներուն եւ հաւատացեալ ժողովուրդին, յատուկ ողջոյնի խօսք ունիմ Նորթ Անտովրի Սուրբ Գրիգոր Լուսաւորից եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին՝ Արժանապատիւ Տէր Ստեփան Քահանայ Պալմեանին, Հոգաբարձութեան եւ յարակից մարմիններուն, որոնք կը հիւրընկալեն ներկայ Ազգային Երեսփոխանական Ժողովը եւ մեր կեցութիւնը կը դարձնեն հանգիստ եւ հանելի: Տասնըհինգ տարի առաջ, երբ Նորթ Անտովրի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին, առաջին անգամ ըլլալով կազմակերպեց մեր Թեմի Երեսփոխանական Ժողովը, յատուկ գնահատանքով քաջալերեցի գիրենք, այն «նկատառելի յանդգնութեան» համար, որ ծիսական փոքր գաղութ մը կը կազմակերպէր եւ իր այդ քայլով փորձառութիւն ձեռք կը ձգէր յառաջիկային եւս հանդիսանալու մեր աշխոյժ, գործնապաշտ ու յառաջադէմ համայնքներէն մէկը: Ահա այս ժողովին այստեղ գումարումը լաւագոյն վկայութիւնն է իրենց անխոնջ աշխատանքին, նուիրումին եւ աստուածահանոյ առաքելութեան:

Սրտի պարտք կը զգամ շնորհակալութիւն յայտնել Առաջնորդական Փոխանորդին՝ Գերաշնորհ Տ. Անուշաւան Եպիսկոպոս Դանիէլեանին, իր ան-

սակարկ ծառայութեան համար, մեր հոգեւոր հովիւներուն եւ քահանայ հայրերուն, ինչպէս նաեւ Ազգային Վարչութեան Կրօնական եւ Վարչական ժողովներուն անդամներուն, Թեմիս հոգաբարձական կազմերոին, նուիրեալ ազգայիններուն եւ բարերարներուն, Տիկնանց Միութիւններուն թէ դպրաց դասերուն մէջ ծառայող սարկաւազներուն ու դպիր-դպրուհիներուն, որոնք հաւատարմութեամբ եւ ժրաջանութեամբ ծառայեցին մեր ժողովուրդին եւ նպաստեցին ներդաշնակ ու արդիւնալից գործունէութեան եւ անոնց իրագործումներուն:

Սիրելի՛ ժողովականներ եւ հիւրեր,

Քսան տարի առաջ, Ամերիկայի Արեւելեան Շրջանի եւ Քանատայի Թեմի Երեսփոխանական ժողովին ընտրութեամբ եւ հրաւերով, ստանձնեցի Թեմիս առաջնորդական պաշտօնը, եւ հինգ շրջանի համար վերընտրուելէ ետք, այսօր այլ առաջնահերթութիւններ պատճառ կը դառնան, որ Երեսփոխանական այս պատկանելի ժողովին դիմաց հրաժեշտ տամ առաջնորդական հոգեւոր եւ վարչական իմ պաշտօնիս, մաղթելով յարատեւ յաջողութիւն Թեմիս առաջնորդութեան եւ ծառայութեան:

Յետադարձ ակնարկով մը, երբ կը վերանայիմ քսան տարիներու իմ ծառայութեան, հոգեկան խաղաղութեամբ ամէն բանէ առաջ փառք կու տամ Ամենակալ Աստուծոյ, որ զիս հոգեպէս, մտապէս եւ ֆիզիքապէս կենսունակ պահեց, որպէսզի, իմ ոյժերուս ներած չափով, գոհացնեմ այն բոլոր կարիքները, որոնք կը միտէին մեր հաւատացեալ ժողովուրդին հոգեւոր անումին, եւ որպէս Հայ Եկեղեցւոյ եւ Հայ ժողովուրդի գաւակներ, շարունակեմ պահել դարերէ եկող սուրբ կտակը առաւել պայծառութեամբ եւ ոգեղինութեամբ եւ գայն ծառայեցնել Աստուծոյ փառքին եւ մեր եկեղեցւոյ յառաջդիմութեան: Առանց Աստուծոյ օգնականութեան, վստահ եմ որ մարդկային մեր միտքն ու մարմինը պիտի չկարենային դիմանալ այս բոլոր մարտահրաւերներուն:

Աստուծոյ տուած փառաբանութեան կողմին, կ'ուզեմ սրտանց շնորհակալութիւն յայտնել յատկապէս պանծալի մեր ժողովուրդին եւ գործակից ժողովականութեան — Երեսփոխանական ժողովին, Ազգային Վարչութեան, Հոգաբարձութիւններուն — իրենց ցուցաբերած ներդրումներումներուն եւ ցուցմունքներուն համար:

Չեմ գիտեր թէ ո՛րքան կարողացայ աշխոյժ եւ ազդու պահել այն ժառանգը, որ իմ նախորդս՝ Երջանկայիշատակ Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշնեանը ծրագրած եւ իրագործած էր, իր ալ բսան տարիներու ծառայութեան ընթացքին: Անոր երախտարժան նուիրումին որպէս արդիւնք, Ազգային Առաջնորդարանս իր համայնքներով միասին, համեստ վիճակէ սլացաւ դէպի նորանոր իրագործումներ, ստեղծեց եւ կազմակերպեց Քրիստոնէական Դաստիարակութեան եւ Հայեցի Դաստիարակութեան խորհուրդները, որոնք ձեռնհասօրէն կատարեցին եւ կը շարունակեն կատարել իրենց դիմաց կանգնող պարտաւորութիւններն ու կարիքները, միշտ նկատի ունենալով արհեստավարժական նորանոր ու շինիչ միջոցներ, առաւել եւս օգտակար հանդիսանալու համար հաւատացեալներուն հոգեւոր եւ ազգային սնուցումին: Զանազան եւ բազմատեսակ ծրագիրներու իրագործումը կը կարօտի նուիրեալ անձերու, որոնք ցայժմ ունինք, բայց անհրաժեշտ է գտնել ու պատրաստել նոր մարդուժ, մասնագիտացած անձեր, որոնք իրենց կարողութիւնները, ձիրքերն ու տաղանդները ի գործ դնեն թարմ եւ օգտակար յաջողութիւններ ձեռք ձգելու համար:

Ամենէն յատկանշական աշխատանքը որ Ազգային Վարչութիւններու քաջալերանքով կատարեցի՝ հոգեւորականներու պատրաստութեան ծրագիրն էր: Լուրջ մտահոգութեան եւ կարիքի դիմաց կը գտնուէր մեր հոգեւորականաց դասը: Անհրաժեշտ էր ունենալ Արեւմտեան արժէքները եւ կարիքները գոհացնելու կարող անձեր, որպէսզի ուսումով եւ պատրաստութեամբ լիցֆաւորուէին, կարենալ լեցնելու եւ գոհացնելու մեր եկեղեցւոյ եւ հաւատացեալներուն կարիքները: Անոնց յաջողութեամբ, մեր հոգեւորականաց դասը կարող ըլլայ դառնալու միջոց՝ մեր թեմի համայնքներու կենսունակութեան եւ յառաջդիմութեան: Արտաքինապէս դիւրին աշխատանք կը թուի, սակայն

պատասխանատու եւ դժուարին նախաձեռնութիւն է: Այսօրուան աշխարհայնացած աշխարհը, պատանի սերունդին ընտրութիւն կատարելու ազատութիւնը եւ իրաւունքը, ընտանեկան եւ ընկերային պարտաւորութիւններ, առողջ դաստիարակութեան եւ կրթութեան դժուարութիւնները՝ դպրոցներէ ներս եւ երբեմն ընտանիքներէ ներս, մեզ դէմ յանդիման կը դնեն լուրջ մտահոգութիւններու եւ դժուարութիւններու: Երկար ժամանակի վրայ տարածուող հեռատես աչքեր պէտք են, գոհացնելու համար ապագային մեր դիմաց ցցուող կարիքները: Եւ նանչնալով, տեսնելով պահանջը հոգեւոր ու մտաւոր պատրաստութեամբ զինուած պատանիներու եւ երիտասարդներու, առիմ հոգեւորականներու պատրաստութեան յանդուգն քայլը, եւ ուրախ եմ յայտնելու որ մեծ չափով յաջողեցանք: Գալով պատանի մեր սերունդին, մեր ծիսականներու գաւակներու հոգեւոր եւ մտային պաշարին գօրացման, ջանացիմ կատարել միշդ ախտանաւաչում եւ գտնել բուժիչ լուծում: Ահա մեր մտահոգութիւնները գոհացնելու համար, կազմեցիմք Երիտասարդական Ծառայութեան յանձնախումբը, որուն առաջնահերթ պարտականութիւնն է՝ կարելի չափով մեր պատանի սերունդը ներառնել մեր եկեղեցւոյ կեանքէն ներս, զիրենք զինել հոգեւոր արժէքներով եւ ազգային գիտակցութեամբ, պատրաստել ապագայի սերունդ մը, որպէսզի մեր ժողովուրդի ոսկեղէն շրթան երկարի ու երկարի նոր օղակներով, աւելի գիտակից յանձնառութիւններով: Որքա՛ն ուրախ եմ այն յաջողութիւններով, որոնք սկիզբ առած են: Որքա՛ն երախտապարտ պիտի ըլլամ ձեր բոլորին՝ հոգեւոր հայրեր, երեսփոխաններ, հոգաբարձուներ, Կիրակնօրեայ եւ Շաբաթօրեայ վարժարաններու ուսուցիչներ, կազմակերպութիւններու եւ միութիւններու անդամներ, մանաւանդ գիտակից ծնողներ, երբ ձեր ուսերուն դրուած պատասխանատուութիւններն ու պարտաւորութիւնները յաջողապէս կատարէք, ո՛չ թէ այսօրուան նեղ ու սահմանափակ ժամանակին համար, այլ մանաւանդ ապագայի փայլուն տեսիլներով եւ ակնկալութիւններով: Ձեր աշխատանքը դիտեցէք յարաբերականութեան դրական տեսանկիւնէն, ընդունելով եւ տեսնելով որ մեզմէ աւելի յաջող գործ ու աշխատանք տանողներ կան, եւ ձգտիմք լաւագոյնին ու աւելիին, եւ ոչ թէ գոհանանք ժիտական

յարաբերականութեամբ, որ հիւանդը կ'ունենայ, երբ ինֆզինֆ կը միփարէ՝ մտածելով որ իրմէ աւելի տառապող ու ցաւող հիւանդ ալ կայ: Եթէ անցնող տարիներուն ընթացփին յաջողութիւններ արձանագրուեցան, (գործը ի՛նֆ թող խօսի), այդ բոլորը կը պարտիմ հաւաքական մեր նիգին, գոհողութեան, սկզբունփներու հաւատարմութեան, ժողովականութեան եւ պաշտօնէութեան ժրաջան աշխատանփին, մա՛նաւանդ մեր ժողովուրդին նուիրումին եւ հաւատարմութեան, իսկ թերացումները՝ անպայմանօրէն ակամայ, վերագրեցէփ իմ անձիս եւ հարցերը նիշդ կամ յստակ տեսնելու կարնատեսութեանս: Շատ լաւ գիտեմ նաեւ, որ միայն աշխատող մարդն է, որ կը թերանայ կամ կը սիսալի: Մեր հաւաքական յիշողութիւնը պէտփ չէ ողբայ, երբ ետ կը նայինփ, ընդհակառակը, անիկա պէտփ է իթանէ մեր կարողութիւնները՝ նոր յաջողութիւններ նուանելու համար:

Սիրելի՛ ժողովականներ եւ հիւրեր,

Աստուծոյ դիմաց եւ մեր ժողովուրդին կարիփները գոհացնելու հրամայականին դիմաց, պատասիանատուութեան գիտակցութիւնը մեզ կը մղէ առաւել գսպանակումի եւ աշխատանփի: Մեր սրբագան եկեղեցւոյ հաւատփի նշմարտութիւնները, մեր նուիրական ժողովուրդի մշակութային անգին ժառանգութեանց տիրութիւնը եւ տարածումը, մէկ իփօսփով, ամբողջական հայու ինփնութիւնը դրոշմելու մեր առափելութիւնը, ոեւէ ատեն պէտփ չէ ստուերի տակ մնայ: Դարերով, մեր հայրերը իրենց անվերապահ գոհողութիւններով պահեցին մեր ազգին սրբագան աւանդը: Տիուր եւ ահաւոր պահեր մթագնեցին մեր ժողովուրդին կեանփը՝ մեր հայրենիփին ու ժողովուրդին հանդէպ գործուած ցեղասպանութեամբ՝ վերջնական կորուստի սպառնալիփներով: Բայց մեր տոկուն հաւատփը, վստահելի յոյսը եւ ցեղային մեր ապառաժեայ նկարագիրը Արարատի կրանիթին նման անբեկանելի, ցցուեցաւ թշնամիին դէմ եւ յարատեւ պայփարով վերապրեցանփ, վերստեղծեցինփ: Քանի մը շաքաթէն պիտի տօնաիմբենփ Մայիսեան փառաւոր յաղթա-

նակին 100-ամեակը: Անիկա մե՛ր պատմութիւնն է, խիզախումը եւ յաղթանակը: Ակա՛նջ տուէ՛ք նահատակ մեր սուրբերու կանչին, մասնակցեցէ՛ք հերոսական մեր ժողովուրդին պայքարին, որպէսզի տօնախմբութիւնները պատգամ ըլլան եւ ոչ թէ յիշատակ:

Յանախ, ես ալ պատգամ ուղղած եմ մեր բարեպաշտ ժողովուրդին: Յուզումով ձեզի կու տամ առաջնորդական վերջին պատգամս: Տասնըինը տարիներ անխափան պատգամներու միջոցաւ ձեզի փոխանցեցի եւ թելադրեցի, որ ուշադրութիւն դարձնէ՛ք այն հարցերուն, որոնք ամէն տարի տարբեր հրամայականներով կ'ունենայինք եւ կը ջանայինք լուսարձակի տակ բերել զանոնք եւ լուծումներ որոնել: Զեր ակնկալութիւնները, ցուցմունքները եւ մանաւանդ յարգալից վերաբերմունքը արժեւորեցին կեանքս, մտապէս հարստացուցին զիս եւ, որպէս մարդ անհատ, ունեցայ բազմաթիւ գործընկերներ եւ հարագատ բարեկամներ: Սրտի պարտք կը զգամ անկեղծ շնորհակալութիւն յայտնել բոլորին անխտիր, Առաջնորդական Տեղապահին, հոգեւոր հովիւներուն, ժողովական իմ գործակիցներուս, Ազգային Առաջնորդարանի պաշտօնէութեան, բարերարներու, եկեղեցւոյ եւ ազգին նուիրուած բոլոր ազգայիններուն եւ կը յորդորեմ բոլորդ որ գործէ՛ք «իրարու հետ, իրարու համար»:

Խօսքս կ'աւարտեմ հետեւելով մեր Աստուծոյն՝ Յիսուս Քրիստոսի հրածեշտի խօսքերուն.–

«Սիրեցէ՛ք զիրար: Սիրեցէ՛ք մեր Եկեղեցին, Հայրենիքն ու ժողովուրդը»:

Շնորհակալութիւն:

10 Մայիս, 2018
Նորթ Անտովըր

ՕՇԱԿԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ
Ամերիկայի Արեւելեան Թեմին